

Մարդկանց և կենդանիների համար ընդհանուր ինֆեկցիոն հիվանդությունները

Այս աղյուսակում ներկայացված են որոշ ինֆեկցիոն հիվանդություններ, դրանց՝ մարդկանց փոխանցման ուղիները (անասնամթերքով, շփմամբ, օդակաթիլային եղանակով և այլն): Աղյուսակից նաև կարող եք տեղեկանալ, թե կոնկրետ որ դեպքերում ինչպես կարելի է օգտագործել կաթը և միսը:

Կենդանիների որոշ ինֆեկցիոն հիվանդությունների մարդկանց փոխանցման ուղիները և մթերքի օգտագործումը:

Աղյուսակ 3

Հիվանդության անվանումը	Փոխանցվում է մարդկանց	Մարդկանց փոխանցման ուղիները	Մսի օգտագործում	Կաթի օգտագործում
Դաբաղ	այո	Անասնամթերքի միջոցով Շփման Օդակաթիլային	Եռացնելուց հետո	5 րոպե եռացնելուց հետո
Խշիշան պալար	Ոչ: Թունավորվում է մթերքից	Թունավորվում է մթերքը օգտագործելուց	Արգելվում է	Արգելվում է
Բրուցելյոզ	այո	Անասնամթերքի միջոցով, ծննդօգնության միջոցով	2 ժամ եռացնելուց հետո	5 րոպե եռացնելուց հետո, պաստերիզացիա
Տուբերկուլյոզ	այո	Անասնամթերքի միջոցով Շփման Օդակաթիլային	2 ժամ եռացնելուց հետո	5 րոպե եռացնելուց հետո, պաստերիզացիա
Սիբիրախտ	այո	Անասնամթերքի միջոցով Շփման Օդակաթիլային	Արգելվում է	Արգելվում է
Պաստերելյոզ			Եռացնելուց հետո	5 րոպե եռացնելուց հետո, պաստերիզացիա
Տրիխտֆիտոզ	այո	Անասնամթերքի միջոցով Շփման	Եռացնելուց հետո	

ԽՈՐՀՈՒՐԴ

Տնային պայմաններում պաստերիզացիա իրականացնելու համար անհրաժեշտ է հիվանդ կամ հիվանդության մեջ կասկածվող կենդանու կաթը լցնել էմալապատ ամանի մեջ և հերմետիկ փակել, տաքացնել 70-75°C ջերմաստիճանում 15 րոպե: Այնուհետև թողնել, որ սառչի մինչև 33-37°C ու այդպես թողնել 4 ժամ, որից հետո տաքացնել երկրորդ անգամ՝ 60-65°C ջերմաստիճանում 10-15 րոպե: Այդպիսով կաթը դառնում է պաստերիզացված և օգտագործման համար պիտանի: